Սիպիլ

Ճշմարտության ծարավ

Չուզեցի խաբվիլ մանկությանս օրեն.
Կեղծիքը ահն էր, սարսափն էր կյանքիս.
Պատրանքբերու մեջ ապրիլ վատորեն
Միշտ մերժեց, ատեց իմ խըրոխտ հոգիս:

Վերքերը փաթթող շըղարշնե՛ր քնքուշ,
Ծաղիկնե՛ր որոնք թույն կը պարփակեն,
Սիրտըս փայփայող խոստումներ անուշ,
Որքա՜ն դողացի ձեր սուտ դյութանքեն:

Տենչոտ, հըրաշունչ համբույրնե՛ր անհագ,
Խուսափուկ սիրո գոգտրիկ փսփըսո՛ւք,
Ծով նայվածքներու ահե՛ղ կաղարդանք,
Լանջքըդ տոչորող հրախա՜նձ պասուք:

Ինչպե՜ս մերժեցի, ինչպե՜ս վանեցի
Ձոր արբեցընող խըոռվքն անսահման,
Ընջեցի իսպառ հանձնելով բոցի
Ինչ որ խաբուսիկ երաղ էր միայն:

Եվ թմրեցընող հանկուցիչ սուտոր՝
Դուք որ անդունդին եզերքը անլույս
Կամ գերեղմանի փոսին առընթեր՝

Բուռ-բուռ կը սփռեք ցնորքներ և հույս:

Երբեք ձեր գութին չըդիմեցի ես,
Որպեսզի սուգիս, տագնապներուս մեջ

Փարատեք, անայդ գիշերու պես
Սև կսկիծներուս խավարը անվերջ:

Կյանքին իրական մեծ սարսափներեն
Երբեք չը վախցա. չուղեցի որ զիս
Սուտ տեսիլքներով զգվեն, օրորեն.
Մերկ ճշմարտության ծարավ էր հոգիս:

Խուժդուժ վայելք մ'էր միշտ ինծի համար
Շոշափել դաշույնն, որ պիտի խոցեր
Իմ հեք, բաբախուն սիրտըս խանդավառ
Որ ցավեն կուլար ու կ'ալեկոծեր:

Միշտ բզքտեցի ձեռքով մ'անսարսուռ
Քողը վարդագույն, քողը ոսկեթել,
Որ ճշմարիտը ծածկեց ինձմե զո՛ւր,
Եվ խաբկանքներով ուզեց զիս դյութել:

Ու հիմա, թո՛ղ զիս գալարեն, տանջեն.
Հոգիդ մի՛շտ ազատ, անյլայլ ու սեգ՝
Հաղթապանծ կ'ելլե ցավերու մեջեն.
Միայն թե զինքը չը խաբեն երբեք: